

<p>ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2020/1ՏՀ</p>	<p>PUBLIC PROCUREMENT CONTRACT ON PROCUREMENT OF TECHNICAL SUPERVISION SERVICES FOR THE STATE NEEDS N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2020/1ՏՀ</p>
--	--

<p>ք.Երևան «03» 07 2020թ.</p>	<p>Yerevan "03" 07 2020.</p>
-------------------------------	------------------------------

<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էգիս Ինթերնեյշնլ» ընկերությունը, ի դեմս Պիեռ Մյուրիսի (ծնված՝ 1951 թվականի հունիսի 15-ին), անձնագիր՝ N 18DE98845, տրված Նորդ Լիլի Պրեֆեկտուրայի կողմից, որը գործում է «Էգիս Ինթերնեյշնլ»-ի իրավական ներկայացուցիչ՝ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի տնօրեն Ալնո դը Ղուժիի կողմից 2020 թվականի հունիսի 23-ին տրված լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 21.05.2020թ N 827-Ն որոշումը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:</p>	<p>The Ministry of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia, represented by H. Batikyan, the Secretary General of the Ministry, acting on the basis of the charter (hereinafter referred to as the Client), on the one hand and "Egis International" company, represented by Pierre Meurisse (born June 15, 1951), passport N 18DE98845, issued by Nord Lille Prefecture acting based on the Power of Attorney dated 23 June 2020, given by Arnaud de Rugy (Director of Eastern Europe and Central Asia) as legal representative of Egis International (hereinafter referred to as the Contractor), based on the Government of RA Decree No 827-N dated 21.05.2020, have entered into this Contract on the following:</p>
---	---

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ	1. SUBJECT OF THE CONTRACT AGREEMENT
------------------------------	---

<p>1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:</p>	<p>1.1 The Client shall instruct and the Contractor shall assume responsibility of providing technical supervision services (hereinafter referred to as the Service), pursuant to the requirements of Terms of Reference – Procurement Schedule set out in Annex 1 forming an integral part of this Contract Agreement (hereinafter referred to as the Contract).</p>
<p>1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:</p>	<p>1.2 The Service shall be provided in accordance with the Terms of Reference – Procurement Schedule set forth in the Annex 1, and within the estimated terms.</p>

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	2. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES
---	---

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝	2.1 The Client has the following rights:
---------------------------------------	---

<p>2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը,</p>	<p>2.1.1 To check the progress and quality of the service provided by the Contractor at any time without interfering the activities of the Contractor.</p>
<p>2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.</p>	<p>2.1.2 In case the services provided does not meet the requirements set forth in the Terms of Reference – Procurement schedule set out in Annex 1 of the Contract:</p>

<p>ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը Պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատրուց փոխարինման քրոսիսիս ժամկետ և</p>	<p>a) To reject the acceptance of the Services by determining at its discretion a reasonable time for replacing the Services of improper quality with the one corresponding to the requirements of the</p>
---	--

կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.	Contractor to pay the fine as per set forth by the Clause 5.2 of the Contract, as well as the penalty set forth by the Clause 5.3 of the Contract
բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.	b) To reject the Contract implementation and request to refund the amount paid for the Services and request the Contractor to pay the fine set out by Clause 5.2 of the Contract
2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝	2.1.3 To terminate the Contract unilaterally if the Contractor has essentially breached the Contract. Breach of the Contract by the Contractor shall be deemed essential if:
ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,	a) the Services provided do not meet the requirements set out in Annex 1 of the Contract,
բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը,	b) the Services timing is breached,
գ) սահմանված ժամկետում և կարգով Կատարողը Պատվիրատուին չի ներկայացրել Պայմանագրի 6-րդ կետով նախատեսված ապահովագրությունը:	c) The Contractor has not submitted to the Client the insurance set forth in the Clause 6 of the Contract.
2.2 Պատվիրատուն պարտավոր է՝	2.2 The Client's obligations
2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:	2.2.1 To discuss and accept the output of Services provided based on Terms of Reference – Procurement Schedule, and in case defects are identified in the results of Services, to address an immediate notice to the Contractor thereon
2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:	2.2.2 If the Service output is accepted, to pay the Contractor the amount payable, and, in case of failing to meet the payment terms and deadlines, also the penalty set forth in the Clause 5.5 of the Contract.
2.3 Կատարողն իրավունք ունի՝	2.3 The Contractor has the following rights:
2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:	2.3.1 To request the Client to pay all the amounts payable to him, and, if the Client is in breach of the term specified in the Clause 4.2 of the Contract, also the penalty set forth in the Clause 5.5 of the Contract.
2.4 Կատարողը պարտավոր է՝	2.4 The Contractor's obligations:
2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:	2.4.1 To provide the Services following the conditions specified in Annex 1 of the Contract, and within the observance of the applicable law.
2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:	2.4.2 In cases stipulated by the Contract, to pay the penalty and fine as per set forth in the Clauses 5.2 and 5.3 of the Contract.
2.4.3 Որակավորման և Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա	2.4.3 In case of initiating the liquidation or bankruptcy proceedings during procedures of qualification and the Contract performance security, to inform the

<p>մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:</p>	
<p>3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ</p>	<p>3. PROCEDURE ON HANDOVER AND ACCEPTANCE OF SERVICES</p>
<p>3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:</p> <p>Մինչև Պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):</p>	<p>3.1 The Services provided shall be accepted on the basis of appropriate Handover Record signed both by the Client and the Contractor. The fact of handing over the works to the Client shall be fixed by an appropriate bilateral document approved both by the Client and the Contractor indicating the date of the document.</p> <p>Prior to the date of the service provision by the Contract (inclusive), the Contractor shall provide the Client with an own-signed document, stating the fact of handing over the work to the Client (Appendix N 3.1), and two copies of Handover-Acceptance Record (Appendix N 3).</p>
<p>3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝</p>	<p>3.2 The Handover-Acceptance Record shall be signed if the provided Service is in compliance with the conditions of the Contract. Otherwise, the result of performance of the Contract or a part thereof shall not be accepted, the Handover-Acceptance Record shall not be signed and the Client:</p>
<p>ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.</p>	<p>a) shall take the measures specified by the Contract for similar situations, in order to solve the issue;</p>
<p>բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:</p>	<p>b) shall apply towards the Contractor the sanctions specified by this Contract.</p>
<p>3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:</p>	<p>3.3 Within 10 days following receipt of the Handover-Acceptance Record, the Client shall provide the Contractor with one original of the Handover-Acceptance Record signed by the Client or the justified refusal to accept the Service.</p>
<p>3.4 Եթե Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:</p>	<p>3.4 If the Client does not accept the result of the Contract within the term specified in the Clause 3.3 of the Contract and does not refuse to accept it, then it is considered accepted and on the working day following the deadline specified in the Clause 3.3 of the Contract the Client shall submit to the Contractor the Handover-Acceptance Record approved by it.</p>
<p>4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ</p>	<p>4. CONTRACT PRICE</p>

<p>4.1 Սուկյն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 808,718,880 (ութ հարյուր ութ միլիոն յոթ հարյուր տասնութ հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: *</p> <p>Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:</p> <p>Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:</p>	<p>4.1 The price of the Service subject to be provided by the Contractor under the Contract amounts to 808,718,880 (specify in letters: eight hundred eight million seven hundred eighteen thousand eight hundred eighty) AMD, including VAT.²</p> <p>The price shall cover all the costs incurred by the Contractor, including taxes, duties and other payments stipulated by the applicable law of RA.</p> <p>The Service price is a lump/fixed sum and the Contractor is not entitled to demand the price increase, while the Client is not entitled to decrease it.</p>
<p>4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Վճարումները և դրանցից բխող հարկերը, ներառյալ ԱԱՀ-ն իրականացվելու են Կատարողի «Էգիս ինթերնեյշնլ» ընկերության հայաստանյան մասնաճյուղի միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնաժողովի արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:</p>	<p>4.2 For the Services provided the Client makes cashless payments by transferring the funds in AMD to the Contractor's account. The payments and associated local taxes including the VAT will be done through the Armenian Branch Office of Egis International. The funds transfer is implemented on the basis of the Handover-Acceptance Record, in accordance with the terms of the Contract Payments Timetable (Annex N 2). If the Record is drawn up after the 20th day of the given month and financial means are made available in that month, then the payment is made within 30 business days, but not later than before December 30 of the current year.</p>
<p>5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ</p>	<p>5. PARTIES' LIABILITY</p>
<p>5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:</p>	<p>5.1 The Contractor shall be liable for the performance of the service in accordance with the requirements of the Contract</p>
<p>5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:</p>	<p>5.2 The Contractor shall be charged with a fine in the amount of 0.5% (zero five tenths) of the price defined in the Clause 4.1 of the Contract in each case of providing a service not complying with terms of reference set out in Annex N 1. Wherein, the fine is calculated also in case of fulfilling the result of the service within the period specified by the Contract, but rejected to be accepted by the Client.</p>
<p>5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված</p>	<p>5.3 In case of failure to meet the contractual services provision deadlines, the Contractor shall be charged with a penalty for each delayed working day in the</p>

* Պայմանագրի ընդհանուր արժեքը առանձին ճանապարհատեղագրերի տեխնիկական հսկողության արժեքների հանրագումարն է, որը ներկայացված է Պայմանագրի Հավելված 1.1:

² The total cost of the Contract is the sum of the costs of technical supervision of the individual roads, which is presented in Annex 1 to this Contract.

<p>ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:</p>	<p>amount of 0,05% (zero five hundredths) of the Services to be provided, while failed to provide.</p>
<p>5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:</p>	<p>5.4 The fine and the penalty specified in the Clauses 5.2 and 5.3 of the Contract shall be calculated and made offset within the amounts payable to the Contractor.</p>
<p>5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:</p>	<p>5.5 In case of failure to meet the terms set forth in the Clause 4.2 of the Contract, the Client is charged with a penalty calculated at the amount of 0.05% (zero five hundredths) of the amount payable but not paid, for each overdue business day.</p>
<p>5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>	<p>5.6 In cases not specified in this Contract, the Parties shall be liable for non-implementation or improper implementation of their contractual obligations in accordance with the procedures set forth by the applicable law of the Republic of Armenia.</p>
<p>5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:</p>	<p>5.7 The payment of penalties and/or surcharges does not release the Parties from implementation of their contractual obligations.</p>
<p>6. ԿԱՏԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ</p>	<p>6. CONTRACTOR'S INSURANCE</p>
<p>6.1 Կատարողը սույն Պայմանագրի գործողության ողջ ընթացքում պետք է ունենա մասնագիտական պատասխանատվության ապահովագրություն՝ սույն Պայմանագրի գնի չափով (այսուհետ՝ Ապահովագրություն) բոլոր պատահարների հայցերի համար, և Պատվիրատուի համար ընդունելի պայմաններով՝ ներառյալ և չսահմանափակվելով հետևյալ պայմանների պարտադիր պահպանմամբ, մասնավորապես՝</p>	<p>6.1 The Contractor shall have professional liability insurance for the entire period of validity of the Contract equal to the price of the Contract (hereinafter referred to as the Insurance) for all accidents / claims, and with conditions acceptable to the Client, including but not limited by mandatory observance of the following conditions, in particular</p>
<p>6.1.1 Ապահովագրությունը պետք է ծածկի Կատարողի և (կամ) վերջինիս աշխատակիցների և (կամ) վերջինիս անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձանց կողմից Ծառայությունը մատուցելու ընթացքում և (կամ) հետևանքով առաջացած հնարավոր սխալների և (կամ) բացթողումների հետևանքով առաջացած պատասխանատվությունը,</p>	<p>6.1.1 The Insurance shall cover liability for possible errors and/or omissions caused by the Contractor and (or) the employees of the latter and (or) the persons authorized to act on behalf of the latter during the performance of the Service or as a consequence thereof</p>
<p>6.1.2 Ապահովագրությունը պետք է գործի սույն Պայմանագրի գործողության ողջ ժամկետում՝ մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:</p>	<p>6.1.2 The Insurance shall be valid for the entire period of the Contract until full implementation by the Parties of the obligations under the Contract.</p>
<p>6.1.3 Ապահովագրությունը չպետք է նախատեսի «ոչ պայմանական չհատուցվող գումար»,</p>	<p>6.1.3 The Insurance should not provide “unconditional deductible”.</p>
<p>6.2 Կատարողը պետք է Պատվիրատուի պահանջով ապացույցներ տրամադրի Պատվիրատուին, որ պահանջվող ապահովագրությունները ներկայացված են և արդեն գործող են: Կողմերը պետք է ապահովեն:</p>	<p>6.2 The Contractor shall provide the Client with evidence at the request of the latter that the required insurance is presented and is valid, and that the current insurance premiums have been paid. The</p>

<p>ապահովագրավճարները կատարված են: Կատարողը պետք է ապահովի, որ նշված ապահովագրությունները առկա լինեն նախքան Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման մեկնարկը:</p>	<p>Contractor shall ensure that the requested insurance is available prior to the commencement of the Services specified in the Contract.</p>
--	---

<p>7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)</p>	<p>7. FORCE MAJEURE</p>
---	--------------------------------

<p>Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:</p>	<p>The Parties shall be released from the liability for failure to implement in whole or in part their contractual obligations, if such failure was caused by the force-majeure circumstances arising after the conclusion of the Contract and the Agreements signed on the basis of it, which the parties could have neither foreseen nor prevented. Such situations may be deemed earthquake, flooding, fires, wars, declaration of martial law and state of emergency, political unrest, strikes, communication breakdowns, acts of state governing bodies, etc., which make the implementation of the obligations under the Contract impossible. If the force-majeur affect continues for more than 3 (three) months, then each of the Parties has the right to terminate the Contract, upon addressing another Party a written notification in advance.</p>
---	--

<p>8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</p>	<p>8. OTHER PROVISIONS</p>
--------------------------------	-----------------------------------

<p>8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:</p> <p>Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:</p>	<p>8.1 The Contract shall enter into force upon signing by the Parties and shall remain in force and valid until the complete implementation of the obligations undertaken by the Parties under the Contract.</p> <p>The precondition for fulfilling the rights and responsibilities of the Parties assumed by the Contract is this Contract to be registered by the Ministry of Finance of the Republic of Armenia.</p>
--	--

<p>8.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:</p>	<p>8.2 Any contract-based payment obligation of the Party cannot be intercepted by the set-off of a counter-obligation arising from another contract, unless the written consent of the Parties is obtained. The claim and entitlement demand rights arising from the Contract shall not be transferred to any third party without the written consent of the debtor.</p>
---	---

<p>8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը,</p>	<p>8.3 In case when resulted in by supervision or control over the compliance, with the requirements of the law, or by complaints review it is recorded, that during the procurement process, before the conclusion of the Contract, the Contractor has submitted false</p>
--	---

(տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման

acknowledge the latter as the selected participant does not comply with the applicable law of the Republic of Armenia, after discovering the grounds mentioned, the Client terminates the Contract on a unilateral basis, provided that the registered violations, if had been discovered before signing the Contract, would become a ground for rejection of the Contract conclusion. Moreover, the Client shall not bear any the risks of losses or missed profits for the Contractor due to unilateral termination of the Contract, while the latter is obliged to reimburse the losses incurred by the Client to the very same extent, to which the Contract is terminated

8.4 All disputes arising from or in connection with the Contract shall be settled in the courts of law of the Republic of Armenia.

8.5 All the amendments and modifications to the Contract shall be made only based on the mutual consent of the Parties by concluding an appropriate Agreement, which shall be deemed an integral part of the Contract. It is prohibited to apply to the Contract (and if the price of the Contract is a time-based one, then also in the Agreements to the Contract concluded each year following the Contract), any modifications leading to the artificial changes in the procured works unit rates or in the Contract price. Each case of modifications to the Contract made within the impact of factors beyond the will of the Parties shall be defined by the Government of the Republic of Armenia.

8.6 The service provision term may be extended until such term expires by the Contract in case the Contractor's proposal availability, provided that the Client's request for works has not expired, while the Contractor's proposal shall be submitted at least in 5 calendar days prior to the deadline for works implementation set forth by the Contract. Wherein, in the case defined by this Clause, the Service implementation term may be extended once for up to 30 calendar days, but not longer than the term defined by the Contract.

8.7 Under the conditions of proper implementation of

Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

incurred by the parties (Contractor or Client) are respectively the benefits or the losses of the relevant party.

All the obligations of the Contract Parties to any third parties, including other deals and transactions made by the Contractor and the obligations arising from them, are beyond the scope of the Contract and shall not affect the acceptance of the Contract implementation results. All the relations and interactions in respect of implementation of such transactions and the obligations arising from them are settled by the norms and provisions regulating the relations within those transactions, and the Contractor is responsible for them.

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.8 The Contract shall not be amended or modified due to the partial non-implementation of the Parties' obligations or terminated based on the mutual agreement of the Parties, except in cases of reduction of financial allocations needed for the service provision, made in accordance with the procedure established by the applicable law of the Republic of Armenia. Wherein, the mutual agreement of the Contract parties on partial non-fulfillment of obligations or full termination must be obtained before the reduction of the financial allocations necessary for the performance of the service is done following the procedure set forth by the applicable law of the Republic of Armenia.

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

8.9 Notification on complete or partial termination of the Contract on the grounds of non-implementation or improper implementation of the obligations undertaken by the Contractor shall be published by the Client in the Section of "Notifications on Unilateral Termination of Contracts" at www.procurement.am, indicating the date of publication. From the date following the day of such publication, the Contractor shall be deemed duly notified of the unilateral termination of the Contract. The Notice of termination of the Contract in whole or partially unilateral shall be sent by the Client to the Contractor's e-mail on the day of its publication in the newsletter.

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը

8.10 All disputes arising from the Contract shall be settled through negotiations. In case it is impossible to reach a consensus, the disputes are subject to be

<p>8.11 Սույն պայմանագիրը բաղկացած է 9 (ինը) էջից, կնքվում է հայերեն և անգլերեն լեզուներով երկու օրինակից: Անգլերեն և հայերեն տեքստերի միջև ցանկացած անհամապատասխանության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տարբերակը: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:</p>	<p>8.11 This Contract consists of 9 (nine) pages, is signed in Armenian and English languages in two copies. In case of any discrepancies between English and Armenian texts, preference is given to the Armenian version. Annexes N 1, N 1.1, N 2, N 3 and N 3.1 of this Contract form an integral part of this Contract. Each Party is provided with one copy.</p>
---	--

<p>8.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:</p>	<p>8.12 This Contract is governed by the law of RA.</p>
---	---

<p>9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>	<p>9. LEGAL ADDRESSES, BANKING DETAILS AND SIGNATURES OF THE PARTIES</p>
---	---

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ	Կ Ա Տ Ա Ր Ո Ղ	
<p>«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՀ 900011002632 ՀՎՀՀ 02815457 գլխավոր քարտուղար Հ. Բատիկյան</p>  <p>Հ. Բատիկյան /ստորագրություն/ Կ.Տ.</p>	<p>Էգիս Ինթերնեյշնլ ընկերություն Հասցե՝ Ֆրանսիա, Գայանկուր 78280, Ավենյու դու Ցենտրե 15 ՀՎՀՀ՝ 582 132 551 00174 Էլ. փոստի հասցե՝ <u>tender-unit.ecca@egis.fr</u> Հեռ.՝ +33 1 39 41 40 00 Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի տնօրեն Ադնո դը Ղուժի</p>	<p>«Էգիս Ինթերնեյշնլ ընկերության» հայաստանյան մասնաճյուղ Հասցե՝ ՀՀ, ք.Երևան Զեյնս Բրայսի փ., տուն 19/1 ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ ՀՀ՝ 21700-003-022944-001 ՀՎՀՀ՝ 02622332 Էլ. փոստի հասցե՝ pierre.meurisse-ext@egis.fr Հեռ.՝ +33 6 11269104 Լիազորված անձ՝ Պիեռ Մյուրիշս</p>  <p>Պիեռ Մյուրիշս /ստորագրություն/ Կ.Տ.</p>

CLIENT	CONTRACTOR	
<p>RA Ministry of Territorial Administration and Infrastructure Address: Government Building 3, Yerevan 0010 Central Treasury of the Republic of Armenia Bank account number: 900011002632 Tax Payer Identification Number: 02702598 Secretary General H. Batikyan</p>  <p>/signature/ SEAL</p>	<p>Egis International Address: 15 Avenue du Centre 78280 Guyancourt, France Tax Payer Identification Number: 582 132 551 00174 e-mail: <u>tender-unit.ecca@egis.fr</u> tel.: +33 1 39 41 40 00 Director of Eastern Europe and Central Asia Arnaud de Ruyg</p>	<p>Armenian Branch Office of Egis International Address: RA, Yerevan, Str. James Bryce, house 19/1 HSBC Bank Armenia CJSC Bank account number: 21700-003-022944-001 Tax Payer Identification Number: 02622332 e-mail: pierre.meurisse-ext@egis.fr tel. +33 6 11269104 Assignee: Pierre Meurisse</p>  <p>/signature/ SEAL</p>

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	71351540/65	Ստորև	դրամ	808,718,880	1	Ըստ ցանկի	Ստորև

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՏԵՂԱՄԱՍ 1, ՏԵՂԱՄԱՍ 2

ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ Տեղամաս 1-ում (ՀՀ Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Արարատի, Արմավիրի մարզեր) և Տեղամաս 2-ում (ՀՀ Շիրակի, Լոռիի, Արագածոտնի, Տավուշի, Կոտայքի, Գեղարքունիքի մարզեր) նախատեսված օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն

Ծրագրի անվանումը	ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	2020թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Ծառայության անվանումը	ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ Տեղամաս 1-ում (ՀՀ Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Արարատի, Արմավիրի մարզեր) և Տեղամաս 2-ում (ՀՀ Շիրակի, Լոռիի, Արագածոտնի, Տավուշի, Կոտայքի, Գեղարքունիքի մարզեր) նախատեսված հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն

Ճանապարհների անվանումները և հատվածները

ՏԵՂԱՄԱՍ 1

Տեղամաս 1-ում հիմնանորոգվող ճանապարհներ և տրանսպորտային օբյեկտներ

Ճանապարհի անվանումը	Ճանապարհի նշանակություն	Հիմնանորոգվող հատված և երկարություն (կմ)	Շին. աշխ. կատ. ժամկետ
Գոտի 1. ՀՀ Սյունիքի մարզ			
Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման	Միջպետական նշանակության	Կմ167+600-կմ174+100 հատվածի հիմնանորոգում (6.5 կմ)	190 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
		Կմ265+000-կմ270+000 հատվածի հիմնանորոգում (5 կմ)	180 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
Հ-46, Մ2-Տաթև-Աղվանի-Մ2 (Սյունիք)	Հանրապետական նշանակության	Կմ 25+000-կմ 37+500 հատվածի հիմնանորոգում (12.5 կմ)	210 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
Գոտի 2. ՀՀ Գեղարքունիքի մարզ			
Մ10, Սևան-Մարտունի-Գետափ	Միջպետական նշանակության	Կմ 5+750- կմ 5+886 հատվածի հողային պաստառի վերականգնում և մետաղական առեփականակառուցում	120 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը

		(0.14 կմ)	
		Կմ 6+850 – կմ 7+034 հատվածի հողային պաստառի վերականգնում և մետաղական արգելափակոցների տեղադրում (0.18 կմ)	120 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
		Կմ64+500-կմ66+000 հատվածի հիմնանորոգում (1.5 կմ)	190 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
Մ-14, Մ-4- Շորժա- Վարդենիս	Միջպետական նշանակության	Կմ 32+888-կմ33+628 և կմ52+970-կմ53+350 փլուզված հատվածներում գաբիոնային հենապատերի կառուցում	120 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
		Կմ19+450 - կմ39+400 հատվածի հիմնանորոգում (20 կմ)	190 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքայի ն գլխավոր ճանապարհ	Մարզային նշանակության	3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգում (3.3 կմ)	180 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
Գոտի 3. ՀՀ Վայոց Ձորի մարզ			
Հ42, /Մ-2/ - Չառիթափ - Նոր Ազնաբերդ նախիջևանի սահման ավտոճանապարհ	Հանրապետական նշանակության	Կմ9+500 - կմ23+500 հատվածի հիմնանորոգում (14 կմ)	210 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
Գոտի 4. ՀՀ Արարատի մարզ			
		Կմ33+500 - կմ42+600 հատվածի հիմնանորոգում (9.1 կմ)	210 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
/Հ-13/ - Նորաբաց- /Հ- 14/	Հանրապետական նշանակության	5,2 կմ հատվածի հիմնանորոգում (5.2 կմ)	110 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
Գոտի 5. ՀՀ Արմավիրի մարզ			
Մ-9, Մ-1- Թալին- Քարակերտ- Թուրքիայի սահման	Միջպետական նշանակության	Կմ53+800-կմ58+000 հատվածի հիմնանորոգում (4.2 կմ)	190 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
Հ-17, Մ-5- Արմավիր-Մ-9	Հանրապետական նշանակության	Կմ0+000 - կմ2+070 (2.07 կմ)	210 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
Մոտեցում Մեծամորի թանգարան 4,1 կմ (3,6+0,5). Մայրերի կառուցում գ Տարածվել են	Հանրապետական նշանակության	Կմ2+119-կմ2+700 (ձախ), Կմ2+138- կմ2+700 (աջից)	60 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը

(ծախ), կմ 2+138-կմ2+700 (աջից)			
S-3-21, Մ5- Երվանդաշատ- Բազարան	Մարզային նշանակության	Կմ19+900-կմ22+400 հատվածի հիմնանորոգում (2.5 կմ)	150 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
S-3-11, /Հ-15/ (Արմավիր գ.) - Նալբանդյան - Գետաշեն - Նոր Կեսարիա - /Մ- 5/	Մարզային նշանակության	Կմ0+000- կմ3+000 հատվածի հիմնանորոգում (3.0 կմ)	150 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը

ՏԵՂԱՄԱՍ 2

Տեղամաս 2-ում հիմնանորոգվող ճանապարհներ և տրանսպորտային օբյեկտներ

Ճանապարհի անվանումը	Ճանապարհի նշանակություն	Հիմնանորոգվող հատված և երկարություն (կմ)	Շին. աշխ. կատ. ժամկետ (Հաշված՝ շինարարի հետ կնքվող համաձայնագրի ուժի մեջ մեջ մտնելու օրից)
------------------------	----------------------------	--	--

Գոտի 6. ՀՀ Շիրակի մարզ

Հ-75, Իսահակյան- Գյումրի	Հանրապետակ ան նշանակության	Կմ37+500-կմ45+300 հատվածի հիմնանորոգում (7.8կմ)	180 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
--------------------------------	----------------------------------	--	--

Գոտի 7. ՀՀ Լոռու մարզ

Հ31, /Մ-1/ - Վարդապետյուր - Տաշիր - /Մ-3/	Հանրապետակ ան նշանակության	Կմ35+300 - կմ45+300 հատվածի հիմնանորոգում (10 կմ)	210 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
---	----------------------------------	--	--

Գոտի 8. ՀՀ Արագածոտնի մարզ

Մ- 3, Թուրքիայի սահման- Մարզարա- Վանաձոր- Տաշիր- Վրաստանի սահման	Միջպետական նշանակության	Կմ45+300-կմ53+000 հատվածի հիմնանորոգում (7.7 կմ)	190 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
---	----------------------------	---	--

Մ-9, Մ-1- Թալին- Քարակերտ- Թուրքիայի սահման	Միջպետական նշանակության	Կմ1+300-կմ3+600 հատվածի հիմնանորոգում (2.3 կմ)	190 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
---	----------------------------	---	--

S-1-45, Ապարան - Ձորագլուխ ավտոճանապա րհի Չքնաղ - Ձորագլուխ	Մարզային նշանակության	Չքնաղ - Ձորագլուխ /5,4կմ/ հատվածի հիմնանորոգում (5.4 կմ)	160 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
--	--------------------------	---	--

S-1-39, /Մ-1/ - Կաթնաղբյուր - Շղարշիկ - Եղնիկ - (S-1-17)	Մարզային նշանակության	Կմ6+900 - կմ10+800 հատվածի հիմնանորոգում (3.9 կմ)	180 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
---	--------------------------	--	--

S-1-51, Հ21- Վարդաբլուր	Մարզային նշանակության	Կմ0+000 - կմ2+000 հատվածի հիմնանորոգում (2.0 կմ)	150 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
----------------------------	--------------------------	---	--

Գոտի 9. ՀՀ Տավուշի մարզ

Մ-4, Երևան- Սևան-Իջևան- Առուեռանի	Միջպետական նշանակության	Կմ 96+176-կմ 96+433 (օղակաձև մաս) հատվածի	80 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
---	----------------------------	---	---

		(0.26 կմ)	
Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան	Միջպետական նշանակության	Կմ 33+500-կմ40+000 հատվածի հիմնանորոգում (6.5 կմ)	190 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
Հ-36, Մ4-Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար	Հանրապետական նշանակության	Կմ7+500-ում փլուզված հատվածի վերականգնում	60 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
Հ-73, /Մ-4/-Պարզ լիճ	Հանրապետական նշանակության	Կմ3+900-կմ9+500 հատվածի հիմնանորոգում (5.6 կմ)	180 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
ՀՀ Տավուշի մարզի Վերին Կարմիր Աղբյուր համայնք	Մարզային նշանակության	Համայնքի 1.65 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգում (1.65 կմ)	150 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքի Մայիսի 28-ի փողոց	Մարզային նշանակության	Իջևան քաղաքի Մայիսի 28-ի փողոցի վերանորոգում (0.5 կմ)	80 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
Գոտի 10. ՀՀ Կոտայքի մարզ			
Հ-5, /Հ-6/-Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան	Հանրապետական նշանակության	Կմ36+000-կմ36+700 հատվածի հիմնանորոգում (0.7 կմ)	80 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը
Գոտի 11. ՀՀ Կոտայքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզեր			
Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման	Միջպետական նշանակության	Մետաղական արգելափակոցների տեղադրում 15 կմ երկարությամբ	120 օր, ոչ ուշ, քան 2020 թ. դեկտեմբերի 10-ը

Ըստ նախագծային փաստաթղթերի

Նախատեսված շինարարական աշխատանքի տեսակը

Տեխնիկական հսկողության ծառայության մատուցման ձևեր, եղանակներ և ընդհանուր պահանջներ

1. Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն, ապահովելով տեխնիկական հսկողության ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեղամասային հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում, համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում (<https://www.arlis.am/documentView.aspx?docID=19495>) բերված հետևյալ դրույթների՝

1.1 Տեխնիկական հսկողությունն իրականացվում է հսկողական ստուգումներով, բացումներով, հսկողական չափագրումներով, աշխատանքների նախագծային ծավալների ստուգումներով, փորձարկումներով:

1.1.1 Հսկողական ստուգում - պարզում է արդեն կատարված շինմոնտաժային աշխատանքների համապատասխանությունը նախագծային լուծումներին և շինարարական նորմերին և կանոններին: Հսկողական ստուգումը կարող է իրականացվել համատարած կամ ընտրովի:

1.1.2 Բացումը - հողով կամ այլ կոնստրուկցիաներով ծածկված շինարարական կոնստրուկցիաների, կոմունիկացիաների և կառուցվածքների վիճակի ստուգումն է ուղղահայաց փոսերի օգնությամբ կամ ծածկող կոնստրուկցիաների մասնակի քանդման ճանապարհով:

1.1.3 Հսկողական չափագրություն - փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների ստուգումն է տեղում:

1.1.4 Աշխատանքների նախագծային ծավալների ստուգում - աշխատանքային գծագրում կամ նրանց կից նախահաշիվներում նշված աշխատանքների ծավալների ստուգում:

1.1.5 Փորձարկում - լաբորատոր պայմաններում կամ տեղում փորձնական բեռնվածքների գործիքների և մեխանիզմների օգնությամբ կառուցվածքների կամ նրանց առանձին մասերի կրողունակության, ամրության, տարբեր տեսակի մեկուսացման, հնարավոր է նաև փորձարկումներ կատարել հողի և օդի մեջ առկա ջրի և առաջնային հիմքերի վրա:

1.2 Ստուգումների և դիտարկումների արդյունքները ձևակերպվում են ակտերով, արձանագրություններով, ուրվագծերով, գծագրերով, լուսանկարներով, տեսաֆիլմերով և նրանց կից համեմատական ամփոփագրերով, աշխատանքային գծագրերով, շինարարության վարման ընդհանուր մատյաններով:

1.3 Շինմոնտաժային աշխատանքների որակի, օգտագործվող նյութերի, իրերի և կառուցվածքների որակի, աշխատանքների կատարման տեխնոլոգիաների և այլնի հետ կապված նկատված թերությունների վերացման ցուցումներն ու նկատողությունները գրանցվում են սահմանված ձևի շինմոնտաժային աշխատանքների վարման ընդհանուր մատյանում:

1.4 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են՝

1.4.1 մասնակցել ավտոճանապարհների, տրանսպորտային օբյեկտների և ինժեներական կառուցվածքների նշահարմանը, շինարարության ընթացքում ապահովել գեոդեզիական սպասարկում և չափագրություններ,

1.4.2 համապատասխան կազմակերպությունների հետ համաձայնեցնել ինժեներական սարքավորումների տեղադրման, գրանցման և փորձարկման հետ կապված հարցերը,

1.4.3 պարբերաբար ստուգել բոլոր կատարված շինմոնտաժային աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը նախագծին, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին,

1.4.4 ստուգել շինարարությունում օգտագործվող նյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և լաբորատոր փորձարկումների և անալիզների արդյունքների գոյությունը և նախագծի ու արտադրանքի որակի պահանջներին անհամապատասխանության դեպքում արգելել դրանց օգտագործումը, այն ձևակերպել համապատասխան ակտերով,

1.4.5 իրականացնել պատասխանատու կոնստրուկցիաների և հանգույցների միջանկյալ ընդունումը, այն ձևակերպել համապատասխան ակտերով,

1.4.6 շինարարության ընթացքում աշխատանքային գծագրերում ամրագրել հաստատված նախագծում սահմանված կարգով կատարված բոլոր փոփոխությունները,

1.4.7 աշխատանքների ընդհանուր մատյանում նշել իր նկատողությունները և դիտողությունները հայտնաբերված թերությունների ու դրանց վերացման մասին,

1.4.8 մասնակցել հեղինակային հսկողության, պետական քաղաքաշինական հսկողության և այլ լիազորված մարմինների կողմից անցկացվող շինարարության որակի ստուգումներին և հետևել հայտնաբերված թերությունների ժամանակին վերացմանը,

1.4.9 հետևել շինարարական կազմակերպությունների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարմանը,

1.4.10 անավարտ աշխատանքների և թերությունների հայտնաբերման դեպքում կազմել նրանց ցանկը, սահմանել դրանց վերացման ժամկետները, կառուցապատողին հանձնել նախագծա-նախահաշվային և տեխնիկական փաստաթղթերը,

1.4.11 մասնակցել շինարարական կազմակերպություններից ստեղծված (կոնսերվացված) կամ դադարեցված շինարարության օբյեկտների ընդունմանը, ինչպես նաև ակտով նրանց հանձնելուն՝ նշելով այդ օբյեկտների տեխնիկական վիճակը:

1.5 Կատարված աշխատանքների տեսակների ու ծավալների ընդունումը իրականացվում է՝

1.5.1 ծածկվող աշխատանքների ընդունման ակտերի ձևակերպման միջոցով,

1.5.2 կատարված աշխատանքների, օգտագործված կոնստրուկցիաների որակը հավաստող հավաստագրերի, ինչպես նաև օգտագործված նյութերի լաբորատոր փորձարկումների արդյունքների և որակը հավաստող հավաստագրերի ստուգման և գնահատման միջոցով,

1.5.3 հետագա աշխատանքների իրականացմանը օբյեկտի տեխնիկապես պատրաստ լինելու մասին միջանկյալ ընդունման ակտերի միջոցով:

1.6 Այն հիմնական շինմոնտաժային աշխատանքների ցանկը, որոնց համար անհրաժեշտ է կազմել ծածկված աշխատանքների ընդունման ակտեր, բերված է ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 1-ում: Ծածկված աշխատանքների ընդունման ակտի ձևը բերված է ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 2-ում: Ծածկված աշխատանքների ընդունման

աշխատանքներին մասնակցում են կառուցապատողի տեխնիկական հսկողությունը, գլխավոր կապալառուի, ենթակապալառուների (իրենց մասնակցության մասով), հեղինակային հսկողությունը և այլ շահագրգիռ անձինք: Ակտերի օրինակների քանակը համապատասխանեցվում է ակտը ստորագրող անձանց քանակին:

1.7 Շինարարության ընթացքում իրականացվում է խոշոր համալիրների, շենքերի մասերի, կառուցվածքների, ինժեներական սարքավորումների և առանձին աշխատանքների միջանկյալ ընդունումը, որոնք ձևակերպվում են աշխատանքների տեխնիկական ընդունման ակտերով, հետագա աշխատանքների իրականացմանը օբյեկտի պատրաստվածության ակտերով, ինժեներական համակարգերի ու ցանցերի, շինվածքների և սարքավորումների փորձարկման ակտերով:

Շինարարական աշխատանքների և ինժեներական սարքավորումների միջանկյալ ընդունման ակտերի օրինակելի ցանկը համապատասխան ձևի նշումով տես՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 3-ում:

Շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակները ենթակա են մշտական օպերատիվ հսկողության, որը գրանցվում է շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր մատյանում:

Շինմոնտաժային աշխատանքների առանձին տեսակների օրինակելի ցանկը, որոնք ենթակա են որակի հսկողության, բերվում է ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 4-ում:

1.8 Ծածկված և միջանկյալ աշխատանքների օպերատիվ հսկողության արդյունքներով տեխնիկական հսկողությունն իրականացնում է աշխատանքների որակի գնահատում և գրանցում է այն համապատասխան մատյաններում և ակտերում: Շինմոնտաժային աշխատանքների որակի գնահատականը տրվում է ակտում:

1.9 Չնայած 6-րդ կետով նշված ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի հավելված 1-ին և հավելված 2-ին կատարված հղումներին, պայմանագրով տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը ստանձնելուց հետո 5 (հինգ) օրյա ժամկետում, Պատվիրատուն Ծառայություն մատուցողին կտրամադրի ճանապարհաշինական հիմնական աշխատանքների համար անհրաժեշտ ծածկված աշխատանքների ընդունման ակտերի ձևը՝ ըստ աշխատանքների առանձին տեսակների:

2. Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեղամասային հսկիչի անհարգելի բացակայության դեպքում տեխնիկական հսկողություն իրականացնողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:
3. Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին:
4. Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը:
5. Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են արգելել կամ պահանջել փոփոխել այն շինարարական նյութերը, որոնք չեն համապատասխանում պահանջվող որակի պահանջներին:

5.1 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի:

- 6 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, ինչպես նաև օգտագործվող նյութերի և կոնստրուկցիաների որակի հավաստագրերը, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ըստ անհրաժեշտության տեխնիկողը կարող է պահանջել լրացուցիչ լաբորատոր փորձարկումների իրականացում: Տեխնիկական հսկողը չի կրում լաբորատոր փորձարկումների հետ կապված ծախսերը:

- 7 Տեխնիկական հսկողը պետք է ուսումնասիրի, հաստատի և մշտադիտարկի կապալառուների կողմից օգտագործվող նյութերը, դրանց աղբյուրները, անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում հրահանգի կապալառուներին՝ հեռացնելու անորակ նյութերը և ապահովելու դրանց փոխարինումը պատշաճ որակի նյութերով, որոնք անհրաժեշտ են շինաշխատանքների որակի նկատմամբ շին.աշխատանքների պայմանագրով և նախագծով սահմանված պահանջները բավարարելու համար:
- 8 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար:
- 9 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են համապատասխան որակով և ծավալով:
- 10 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը, տեխնիկական պահանջները:
- 11 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, ճանապարհային անվտանգության սարքերի համապատասխանությունը (օրինակ՝ ժամանակավոր և շարժական պատնեշները, վթարային արգելափակոցները և այլն), անվտանգության այլ միջոցների առկայությունը՝ շինարարության ընթացքում երթևեկության կազմակերպման հաստատված սխեմաների համապատասխան: Տեխնիկական հսկողություն իրականացնողը պարտավոր է ուսումնասիրել և հաստատել երթևեկության կազմակերպման սխեմաներ և դրանում կատարվող փոփոխությունները: Կատարել համապատասխան ուսումնասիրություններ և առաջարկել ճանապարհային անվտանգության բարելավումներ ու անհրաժեշտ միջոցառումներ: Իրականացնել այցեր ճանապարհային օբյեկտներ՝ զիջերային և ցերեկային ժամերին (այդ թվում՝ պատվիրատուի և ճանապարհային ոստիկանության մասնակցությամբ): Ներկայացնել հաշվետվություն՝ կատարված ուսումնասիրությունների, ճանապարհային անվտանգության մասով հայտնաբերված խնդիրների, յուրաքանչյուր խնդրի համար իրականացնել ռիսկերի գնահատում, և տալ առաջարկություններ: Ճանապարհային անվտանգության մասնագետները կհամակարգեն ու կվերահսկեն անվտանգության միջոցառումների ժամանակին իրականացումը:
- 12 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր):
- 13 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:
- 14 Տեխնիկական հսկողություն իրականացնողները պետք է իրականացնեն տեխնիկական հսկողություն աշխատանքները յուրաքանչյուր տեղամասի (ճանապարհահատվածի) նկատմամբ և ընդունեն աշխատանքները՝ նախագծային փաստաթղթերի, ինչպես նաև պայմանագրի պայմանների և տեխնիկական պահանջների համաձայն: Տեխնիկական հսկողություն իրականացնողները պետք է առաջնորդվեն գործող մասնագրերով, սահմանված ստանդարտներով, մեթոդաբանությամբ և ՀՀ օրենսդրությամբ:

Նախագծային փաստաթղթերում նշված աշխատանքների փոփոխություններ կատարելու առաջարկները պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի և հեղինակային հսկողի հետ:

Տեխնիկական հսկողություն իրականացնողը կապալառուի կողմից աշխատանքները չկատարելու և (կամ) ոչ պատշաճ կատարելու դեպքում պետք է կապալառուին ներկայացնի համապատասխան հրահանգներ և ծանուցումներ: Աշխատանքների ոչ պատշաճ կատարման կամ կապալառուի ցածր առաջընթացի դեպքում, ինչպես նաև, եթե կապալառուն չի հետևում տեխ.հսկողի հրահանգներին և չի բարելավում աշխատանքի որակը, տեխնիկոսը պարտավոր է առաջարկություններ ներկայացնել պատվիրատուին:

Շինարարական աշխատանքների ընթացքում տեխսկողը պարտավոր է ապահովել աշխատանքային անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ պատշաճ հսկողությունը:

Նշանակված տեխնիկական հսկիչի փվյալների և հաշվետվությունների ներկայացման պահանջներ

1. Տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերությունը պարտավոր է պայմանագրով տեխնիկական հսկողության ծառայությունների կատարման պարտավորությունը ստանձնելուց հետո 3 (երեք) օրյա ժամկետում Պատվիրատուին ներկայացնել տեխնիկական հսկողության համար նշանակված հիմնական անձնակազմի և յուրաքանչյուր շինարարական տեղամասի տեխնիկական հսկիչների (տեղամասային հսկիչի) տվյալները (անուն, ազգանուն, ստորագրության նմուշ, հեռախոսի համար):

2. **Հաշվետվողականությունը.** Տեխնիկական հսկողություն իրականացնողները պարտավոր են ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ մոբիլիզացիայի, ամսական և ավարտական հաշվետվություններ, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:

3. **Մոբիլիզացիայի մասին հաշվետվություն.** Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան տասնօրյա ժամկետում, տեխսկողը պետք է ներկայացնի ամփոփ հաշվետվություն՝ ներգրավված անձնակազմի մասին, իր աշխատանքային պլանը և աշխատանքների կազմակերպման մեթոդաբանությունը, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկատվություն կամ առաջարկություններ, որոնք կբարձրացնեն տեխսկողության իրականացման արդյունավետությունը:

4. **Ամսական հաշվետվությունները.** Յուրաքանչյուր ամսվա 15-ից ոչ ուշ, Պատվիրատուի հետ համաձայնեցված ձևաչափով բոլոր շինարարական աշխատանքների օբյեկտների մասով Տեխ.հսկողություն իրականացնողը պետք է ներկայացնի ամսական հաշվետվություն (Հաշվետվությունը պետք է բաղկացած լինի առանձին գլուխներից՝ ըստ համապատասխան ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքներին վերաբերող պայմանագրերի), նշելով օբյեկտների անվանումը, համապատասխան շինարարական պայմանագիրը, տեղամասը, կապալառուի տվյալները, պայմանագրի արժեքը, աշխատանքների մեկնարկը և ավարտը, հսկողություն իրականացնող ընկերության անվանումը, աշխատանքների համառոտ նկարագրությունը (հիմնական երկրաչափական պարամետրերը և խոշոր աշխատանքների ցանկը): Հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի վերահսկող թիմի կողմից պատրաստված նախորդ ամսվա աշխատանքների ամփոփումը՝ ներառյալ պայմանագրերով սահմանված շինարարական աշխատանքների իրականացման առաջընթացը, ըստ աշխատանքի կատարման ժամանակացույցի, ֆիզիկական և ֆինանսական առաջընթացի տվյալները, կատարված աշխատանքների ընդհանուր նկարագրությունը, արձանագրված թերությունները, դրանց վերացման ուղղությամբ Կատարողի կողմից տրված հրահանգները, գոյություն ունեցող խնդիրների համառոտ նկարագրությունները, այդ թվում՝ տեղամասերում արձանագրանցված խնդիրներ և վերջիններիս մասով առաջարկվող լուծումներ, շինարարական աշխատանքների պայմանագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ կապալառուի հարցումները, շինարարական աշխատանքների իրականացման շրջանակներում ստեղծված աշխատատեղերը, ինչպես նաև իրականացվող շին. աշխատանքների պայմանագրերից յուրաքանչյուրի մասով Պատվիրատուի կողմից պահանջվող այլ համապատասխան տեղեկատվություն:

Ամսական հաշվետվություններում Կատարողն պետք է ներառի համապատասխան բաժիններ նաև՝ նախկինում զեկուցված խնդիրների կարգավիճակի/առաջընթացի, ինչպես նաև Տեխսկողի/պատվիրատուի/Կապալառուների կողմից այդ խնդիրների լուծման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ: Հաշվետվությունը պետք է պարունակի նաև Կատարողի նախորդ ամսվա կատարած աշխատանքների վերաբերյալ գրավոր տեղեկատվությունը և արձանագրությունները (ժամաթերթեր, պատվիրատուի և կապալառուների հետ նամակագրության պատճենները և այլն), ինչպես նաև որակի հսկողության և կառավարման մասով համապատասխան հաշվետվություններ:

Յուրաքանչյուր Ամսական հաշվետվությանը կից պետք է ներկայացվեն տվյալ ամսվա համար Տեխնիկական հսկողություն իրականացնողի վճարման հայտը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:

4.1. **Հատուկ պահանջներ.** Ամսական հաշվետվությունները ներառելու են իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2)),

համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

4.2 Ավարտական հաշվետվությունը. Ավարտական հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր շինարարական օբյեկտի մասով՝ աշխատանքների հանձնում-ընդունումից հետո՝ 10 օրյա ժամկետում և ծառայությունների ավարտից հետո՝ Պատվիրատուի համար ընդունելի ձևով: Հաշվետվության մեջ պետք է ամփոփվեն բոլոր ճանապարհների վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը, կաարևոր միջոցառումները, կապալառուների կատարողականը և արդյունքները, տեխնիկական և ոչ տեխնիկական ցուցանիշները, և այլն:

Ավարտական հաշվետվությունը առնվազն պետք է ներառի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, կատարված աշխատանքների որակը հավաստող փաստաթղթեր, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով):

Նորմատիվային պահանջներ

Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն համաձայն՝

1. ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի,
2. ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների մասին օրենքի,
3. ՀՀՇՆ IV-11.05.02-99
4. Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի,
5. ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգի,
6. ՀՀ կառավարության թիվ N 596-Ն 19 մարտի 2015թ. որոշման
7. ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշման:

Պայմանագրի կառավարում

1. Տեխնիկական հսկողություն իրականացնողները իրավունք չունեն Կապալառուներին ազատել իրենց պարտավորությունների կատարումից կամ սահմանել լրացուցիչ պարտավորություններ, որոնք նախատեսված չեն պայմանագրով:
2. Տեխնիկական հսկողություն իրականացնողները ղեկավարվում են կնքված պայմանագրով և ապահովում են պայմանագրի դրույթների իրականացումը՝ կապված աշխատանքների որակի և ծավալի հետ:
3. Կապալառուների հետ առաջացած ցանկացած արբիտրաժային կամ դատական գործընթացի ընթացքում տեխնիկական հսկողություն իրականացնողը պարտավոր է աջակցել կառուցապատողին արբիտրաժային, վիճահարույց հարցերի լուծման խորհրդի կամ դատարանի հետ առնչվող հարցերում՝ նման պահանջ ներկայացնելու դեպքում:

Տեխնիկական հսկողություն իրականացնողի անձնակազմին ներկայացվող պահանջներ

1. Որակյալ ծառայություն մատուցելու նպատակով տեխնիկական հսկողություն իրականացնողը պետք է ապահովի համապատասխան անձնակազմ՝ բաղկացած որակավորված և ընդունելի փորձառություն ունեցող այնպիսի մասնագետներից, որոնք ունեն համապատասխան կարողություններ տեխնիկական բնութագրով սահմանված պարտականություններն ու գործառույթներն ապահովելու համար: Հիմնական անձնակազմում ներգրավված մասնագետների փոխարինումը կարող է իրականացվել միայն պատվիրատուի նախնական գրավոր համաձայնությամբ: Պատվիրատուն իրավասու է պահանջել Տեխհսկողից փոխարինելու ներգրավված ցանկացած փորձագետի կամ մասնագետի, իր վրա դրված պարտականությունների ոչ պատշաճ կատարման, մասնագիտական ոչ բավարար կարողությունների և/կամ գիտելիքների դրսևորման դեպքում: Անձնակազմի որևէ անդամի մահվան կամ անաշխատունակության դեպքում Տեխ.հսկողը պարտավոր է անմիջապես ապահովել տվյալ մասնագետի փոխարինումը ավելի բարձր կամ համարժեք որակավորում և փորձ ունեցող մասնագետով, առանց պատվիրատուի համար լրացուցիչ ծախսերի: Հիմնական անձնակազմը ենթակա է հաստատման պատվիրատուի կողմից:
2. Տեխհսկողը պետք է ունենա հետևյալ պաշտոնների և քանակի փորձառու հիմնական անձնակազմ՝

Պաշտոն	Նվազագույն պահանջվող քանակ	Միջազգային / տեղական	Փորձառության նվազագույն պահանջ
--------	----------------------------	----------------------	--------------------------------

Թիմի ղեկավար (Մայրուղիների ինժեներ) (Տեղամաս 1 և Տեղամաս 2)	1	Միջազգային	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 20 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման, նախագծման և/կամ տեխնիկական հսկողության (ճարտարագետի) մասնագիտական փորձ՝ 15 տարի:
Թիմի ղեկավարի տեղակալ (Տեղամաս 1)	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 15 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման, նախագծման և/կամ տեխնիկական հսկողության (ճարտարագետի) մասնագիտական փորձ՝ 10 տարի:
Թիմի ղեկավարի տեղակալ (Տեղամաս 2)	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 15 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման, նախագծման և/կամ տեխնիկական հսկողության (ճարտարագետի) մասնագիտական փորձ՝ 10 տարի:
Գլխավոր ինժեներ (Տեղամաս 1)	1	Միջազգային	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 15 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման, նախագծման և/կամ տեխնիկական հսկողության մասնագիտական փորձ՝ 10 տարի:
Գլխավոր ինժեներ (Տեղամաս 2)	1	Միջազգային	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 15 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման, նախագծման և/կամ տեխնիկական հսկողության (ճարտարագետի) մասնագիտական փորձ՝ 10 տարի:
Կամուրջների և/կամ արհեստական կառուցվածքներ ի ինժեներ (Տեղամաս 1 և Տեղամաս 2)	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 10 տարի: Կամուրջների և/կամ արհեստական կառուցվածքների կառուցման և/կամ նորոգման, նախագծման և/կամ տեխնիկական հսկողության մասնագիտական փորձ՝ 7 տարի:
Նյութերի/Որակի ապահովման մասնագետ (Տեղամաս 1 և Տեղամաս 2)	1	Միջազգային	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 15 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման համար օգտագործվող նյութերի/որակի հսկման մասնագիտական փորձ՝ 10 տարի:
Նյութերի/Որակի ապահովման մասնագետ (Տեղամաս 1)	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 10 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների համար օգտագործվող նյութերի/որակի հսկման մասնագիտական փորձ՝ 7 տարի:

Նյութերի/Որակի ապահովման մասնագետ (Տեղամաս 2)	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 10 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման համար օգտագործվող նյութերի/որակի հասկման մասնագիտական փորձ՝ 7 տարի:
Ճանապարհային ծածկի մասնագետ (Տեղամաս 1 և Տեղամաս 2)	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 15 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման, ճանապարհային ծածկի նախագծման և/կամ ճարտարագիտության մասնագիտական փորձ՝ 10 տարի:
Ճանապարհային անվտանգության մասնագետ (Տեղամաս 1 և Տեղամաս 2)	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 7 տարի: Ճանապարհային անվտանգության մասնագիտական փորձ՝ 5 տարի:
Գեոդեզիստ (Տեղամաս 1 և Տեղամաս 2)	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 10 տարի: Գեոդեզիական չափագրման մասնագիտական փորձ՝ 7 տարի:
Նախահաշվորդ (Տեղամաս 1 և Տեղամաս 2)	1	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 7 տարի: Նախահաշվորդի մասնագիտական փորձ՝ 5 տարի:
Տեղամասային հսկիչ (Տեղամաս 1)	15	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 5 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման և/կամ նախագծման և/կամ տեխնիկական հսկողության մասնագիտական փորձ՝ 3 տարի:
Տեղամասային հսկիչ (Տեղամաս 2)	13	Տեղական	Ընդհանուր աշխատանքային փորձ՝ 5 տարի: Ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման և/կամ նորոգման և/կամ նախագծման և/կամ տեխնիկական հսկողության մասնագիտական փորձ՝ 3 տարի:

Հիմնական մասնագետների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ ծառայություն մատուցողը պետք է ներկայացնի Պատվիրատուին համաձայնեցում ստանալու համար՝ պայմանագիր կնքելուց հետո: Առանձին դեպքերում, առանձնահատուկ օբյեկտների (պատվիրատուի ներկայացմամբ) նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող անձանց կցելու հարցը պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ: Բացի վերը նշվածից, տեխնիկական հսկողության ծառայություն մատուցողը կարող է ունենալ նաև “CAD” մասնագետ, թարգմանիչ և ադմինիստրատիվ անձնակազմ:

Հիմնական անձնակազմը պետք է ունենա ամբողջական ներգրավվածություն ծառայությունների ողջ ժամանակահատվածի համար, բացառությամբ կամուրջների և արհեստական կառուցվածքների ինժեների, որի ներգրավման ժամկետը 4 ամիս է և որին ներգրավված կունկրետ ժամանակահատվածը պետք է սահմանվի ըստ աշխատանքների կարիքների՝ պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցով:

3. Տեղամասային հսկիչների ներգրավվածության ժամկետը պետք է սահմանվի մինչև յուրաքանչյուր տեղամասային հսկիչի հսկողության ներքո գտնվող օբյեկտի շինաշխատանքների ավարտը և ավարտական ակտի ընդունումը:

**հիվանդության (COVID-19)
տարածումը կանխելուն
ուղղված կանոններ.**

Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու և աշխատողների համար անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ ապահովելու նպատակով կազմակերպությունները պետք է առաջնորդվեն հետևյալ հիմնական կանոններով՝

1. Ապահովել պայմաններ՝ ձեռքերի կանոնավոր և մանրակրկիտ լվացման և չորացման համար: Աշխատավայրում ապահովել ջրի և օճառի, ակոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչների, եռաշերտ դիմակների, ձեռնոցների առկայությունը:
2. Ապահովել աշխատողների կողմից դիմակների կրումը:
3. Ապահովել փակվող աղբամաններ՝ օգտագործված դիմակները նետելու համար:
4. Յուրաքանչյուր աշխատողի ջերմությունը չափել օրական եկու անգամ (հեռավար կամ անհատական օգտագործման ջեմաչափերով, այդ թվում՝ աշխատակիցների անձնական ջերմաչափերով), որից մեկը աշխատակցի անշխատանքի ներկայանալու ժամանակ, մյուսը աշխատանքի վայրից հեռանալու ժամանակ՝ կատարելով համապատասխան նշումներ գրանցամատյանում: Բաժր ջերմության աշխատակցին հեռացնել աշխատանքի վայրից, հորդորելով ինքնամեկուսանալ և դեպքի մասին անմիջապես տեղեկացնել պատվիրատուին:
5. ՀՀ առողջապահության նախարարի՝ 2020 թվականի մարտի 16-ի N 977-Ա հրամանի համաձայն՝ սահմանել կանոններ և ընթացակարգեր՝ օրական առնվազն երկու անգամ սահմանված ժամերի ախտահանելու տարածքը (այս դեպքում աշխատանքային ճամբարների տարածքը)՝ դռները, բռնակները, սեղանները, ձեռքով համախակի հպման մակերեսները - սարքերի մակերեսները, լոյսի անջատիչները, սարքավորումների վրայի բռնակները, հեռակառավարման վահանակները, ընդհանուր օգտագործման հեռախոսները, համակարգիչները, ստեղնաշարերը և մկնիկները), սանհանգույցները:
6. Ախտահանման համար կիրառել քլորի հիմքով կամ 60%-90% սպիրտ պարունակող ախտահանիչ նյութերը՝ նյութին կից մեթոդական ուղեցույցին համապատասխան:
7. Ապահովել աշխատատեղերի միմյանցից նվազագույնը 2 մետր հեռավորությունը (ըստ Առողջապահական համաշխարհային կազմակերպության ցուցումների):
8. Անձնական (դրսի) և աշխատանքային հագուստի պահպանման համար ապահովել արտահագուստի (սանիտարական հագուստի) համար նախատեսված հանդերձապահարաններ:
9. Աշխատավայրում վիրուսով ախտահարված աշխատակից ունենալու մասին տեղեկատվություն ստանալու դեպքում անհապաղ առանձնացնել այն անձանց շրջանակը, ովքեր շփում են ունեցել վարակակիր անձանց հետ և հայտնել պատվիրատուին, ապահովել տվյալ անձանց մեկուսացումը:
10. Աշխատակազմում վարակի կասկածով աշխատակից ունենալու դեպքում զանգահարել Առողջապահության նախարարության թեժ գիծ և պատվիրատուին, հնարավորության դեպքում անմիջապես ախտահանել այն տարածքը, որտեղ աշխատել է աշխատակիցը, ինչպես նաև ցանկացած այլ տարածք և մակերես, որը կարող էր հասանելի լինել տվյալ աշխատակցին:
11. Աշխատողներին տրամադրել իրազեկման տեղեկատվական թերթիկ:

Տեխսկողը պարտականությունները շինհրապարակում Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելու ուղղությամբ

Տեխսկողը պարտավոր է վերահսկել COVID-19-ի կանխարգելման ուղղությամբ շինհրապարակում ձեռնարկվելիք միջոցառումների կատարմանը: Ելնելով առկա իրավիճակից, տեխ.սկողը կներկայացնի առաջարկություններ և պատվիրատուի հետ համատեղ կմշակի գործողությունների պլան՝ իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ:

Վարչական կարգավորումները

Ակնկալվում է, որ Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունը կկազմակերպի և կկրի Հայաստանում համապատասխան գրասենյակի վարձակալության և կացության համար, ինչպես նաև աշխատանքների իրականացման տեղամասերում, միջազգային և տեղական ճանապարհորդությունների և հսկողության իրականացման համար ավտոմեքենաների և իր անձնակազմի ցանկացած այլ տրանսպորտային ծախսերը, գրասենյակային սարքավորումների, կապի միջոցների, ծառայությունների ու սպառվող նյութերի ծախսերը: Տեխսկողը պետք է ապահովի բանավոր և/կամ գրավոր թարգմանությունների իրականացումը, որոնք կարող են պահանջվել առաջադրանքի իրականացման ընթացքում (ներառյալ շինարարական տեղամասերում) և ապահովի փաստաթղթերի և հաշվետվությունների անգլերեն և հայերեն տարբերակների համահունչ և ճշգրիտ թարգմանությունը (եթե դրանք անհրաժեշտ են միջազգային

անձնակազմի գործառույթների կատարման համար): Համապատասխան վարչական ծախսերը պետք է ներառված լինեն ծառայության արժեքում:

Ծառայությունների մատուցման ժամկետը

Սկիզբը

Ավարտը

Կողմերի միջև կնքվող պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ համապատասխան ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների կատարման սկիզբը

Համապատասխան ճանապարհահատվածների շինարարական աշխատանքների ավարտական հանձնման-ընդունման ավարտը

Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Բ Ո Ղ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ն. Բաադիկյան

Էգիս Ինթերնեյշնլ ընկերություն
Հասցե՝ Ֆրանսիա, Գայանկուղ
78280, Ավենյու դու Յենտղե 15
ՀՀ ՀՀ՝ 582 132 551 00174
Էլ. փոստի հասցե՝ tender-unit.ecca@egis.fr
Հեռ.՝ +33 1 39 41 40 00
Արևելյան Եվրոպայի և
Կենտրոնական Ասիայի
տարածաշրջանի տնօրեն
Ադնո դը Ղուժի

**«Էգիս Ինթերնեյշնլ
ընկերության» հայաստանյան
մասնաճյուղ**

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան Զեյնա
Բրայսի փ., տուն 19/1
Էյլ-Էս-Բի-Մի Բանկ Հայաստան
ՓԲԸ
ՀՀ՝ 21700-003-022944-001
ՀՀ ՀՀ՝ 02622332
Էլ. փոստի հասցե՝
pierre.meurisse-ext@egis.fr
Հեռ.՝ +33 6 11269104
Լիազորված անձ՝ Պիեռ Մյուրիս



Կ.Տ.

Տեխնիկական հսկողության ծառայություններ (Տեղամաս 1 և Տեղամաս 2)

h/h	Օբյեկտների անվանումը	Երկարությունը կմ	
1	2	3	
	2020 Պետական բյուջե	143.45	808,718,880.0
1	Միջպետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում	54.23	
1.1	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման	11.50	
	կմ167+600-կմ174+100 հատվածի հիմնանորոգում	6.50	29,894,158.6
	կմ265+000-կմ270+000 հատվածի հիմնանորոգում	5.00	31,083,957.3
1.2	Մ- 3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման	7.70	
	կմ45+300-կմ53+000 հատվածի հիմնանորոգում	7.70	52,203,851.8
1.3	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Աղբբեջանի սահման	0.26	
	Մետաղական արգելափակոցների տեղադրում 15 կմ երկարությամբ		22,779,308.8
	կմ 96+176-կմ 96+433 (օղակաձև մաս) հատվածի հիմնանորոգման աշխատանքներ	0.26	6,823,518.4
1.4	Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան	6.50	
	կմ33+500-կմ40+000 հատվածի հիմնանորոգում	6.50	37,212,447.8
1.5	Մ-9, Մ-1-Թալին-Քարակերտ-Թուրքիայի սահման	6.50	
	կմ 1+300-կմ 3+600 հատվածի հիմնանորոգում	2.30	25,175,727.1
	կմ 53+800-կմ 58+000 հատվածի հիմնանորոգում	4.20	28,915,451.9
1.6	Մ10, Սևան-Մարտունի-Գետափ	1.82	
	կմ5+750- կմ5+886 հատվածի հողային պաստառի վերականգնում և մետաղական արգելափակոցների տեղադրում	0.14	7,549,838.9
	կմ6+850 - կմ7+034 հատվածի հողային պաստառի վերականգնում և մետաղական արգելափակոցների տեղադրում	0.18	7,928,683.3
	կմ64+500-կմ66+000 հատվածի հիմնանորոգում	1.50	29,649,955.4
1.7	Մ-14, Մ-4-Շորժա-Վարդենիս	19.95	
	կմ32+888-կմ33+628 և կմ52+970-կմ53+350 փլուզված հատվածներում գաբիոնային հենապատերի կառուցում		7,317,834.6
	կմ 19+450 - կմ 39+400 հատվածի հիմնանորոգում	19.95	79,694,772.9
2	Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում	61.77	

	Հ-5, /Հ-6/-Նոր Գեղի-Արգել-Արգական-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ36+000-կմ36+700 հատվածի հիմնանորոգում	0.70	6,562,418.8
	Հ8, Երևան-Արտաշատ-Այգեվան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ33+500 - կմ42+600 հատվածի հիմնանորոգում	9.10	45,124,537.7
	Հ-17, Մ-5-Արմավիր-Մ-9 կմ 0+000 - կմ 2+070	2.07	43,960,424.6
	Հ31, /Մ-1/ - Վարդաղբյուր - Տաշիր - /Մ-3/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ35+300 - կմ45+300 հատվածի հիմնանորոգում	10.00	33,941,126.2
	Հ-36, Մ4-Իջևան-Նավուր-Բերդ-Այգեպար կմ7+500-ում փլուզված հատվածի վերականգնում		2,036,364.5
	Հ42, /Մ-2/ - Զառիթափ - Նոր Ազնաբերդ նախօջևանի սահման հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ9+500 - կմ23+500 հատվածի հիմնանորոգում	14.00	42,386,704.8
	Հ-46, Մ2-Տաթև-Աղվանի-Մ2 (Սյունիք) հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 25+000-կմ37+500 հատվածի հիմնանորոգում	12.50	37,754,422.6
	Հ-73, /Մ-4/-Պարզ լիճ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ3+900-կմ9+500 հատվածի հիմնանորոգում	5.60	22,217,861.4
	Հ-75, Իսահակյան-Գյումրի հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ37+500- կմ45+300 հատվածի հիմնանորոգում	7.80	45,082,486.0
	Մոտեցում Մեծամորի թանգարան 4,1 կմ (3,6+0,5). Մայթերի կառուցում գ Տարոնիկ կմ 2+119- կմ 2+700 (ծախ), կմ 2+138-կմ2+700 (աջից)		1,421,272.7
3	Մարզային նշանակության ավտոճանապարհներ, այդ թվում	27.45	
	/Հ-13/ - Նորաբաց - /Հ-14/ ավտոճանապարհի 5,2 կմ հատվածի հիմնանորոգում	5.20	27,847,792.5
	ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհի 3,3 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգում	3.30	27,346,960.2
	ՀՀ Տավուշի մարզի Վերին Կարմիր Աղբյուր համայնքի 1,65 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգում	1.65	13,562,099.8
	S-1-45, Ապարան - Ձորագլուխ ավտոճանապարհի Չքնաղ - Ձորագլուխ /5,4կմ/ հատվածի հիմնանորոգում	5.40	27,141,550.8
	S-3-21, Մ5-Երվանդաշատ-Բագարան ավտոճանապարհի կմ19+900-կմ22+400 հատվածի հիմնանորոգում	2.50	10,717,054.0
	S-1-39, /Մ-1/ - Կաթնաղբյուր - Շղարշիկ - Եղնիկ - (S-1-17) ավտոճանապարհի կմ 6+900 - կմ 10+800 հատվածի հիմնանորոգում	3.90	23,555,030.6

S-1-51, Հ21-Վարդաբլուր ավտոճանապարհի կմ 0+000 - կմ 2+000 հատվածի հիմնանորոգում	2.00	10,917,311.2
S-3-11,/Հ-15/ (Արմավիր գ.) - Նալբանդյան - Գետաշեն - Նոր Կեսարիա - /Մ-5/ ավտոճանապարհի կմ0+000 - կմ3+000 հատվածի հիմնանորոգում	3.00	13,245,461.7
ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքի Մայիսի 28-ի փողոցի վերանորոգում	0.50	7,668,493.0

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ	Կ Ա Տ Ա Ր Ո Ղ	
<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՀ 900011002632 ՀՎՀՀ 02815457 գլխավոր քարտուղար Հ. Բատիկյան</p> 	<p>Էգիս Ինթերնեյշնլ ընկերություն Հասցե՝ Ֆրանսիա, Գայանկուղ 78280, Ավենյու դու Ցենտղե 15 ՀՎՀՀ՝ 582 132 551 00174 Էլ. փոստի հասցե՝ tender-unit.ecca@egis.fr Հեռ.՝ +33 1 39 41 40 00 Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի տնօրեն Ադնո դը Ղուժի</p>	<p>«Էգիս Ինթերնեյշնլ ընկերության» հայաստանյան մասնաճյուղ Հասցե՝ ՀՀ, ք.Երևան Զեյնս Բրայսի փ., տուն 19/1 Էյջ-Էս-Բի-Մի Բանկ Հայաստան ՓԲԸ ՀՀ՝ 21700-003-022944-001 ՀՎՀՀ՝ 02622332 Էլ. փոստի հասցե՝ pierre.meurisse-ext@egis.fr Հեռ.՝ +33 6 11269104 Լիազորված անձ՝ Պիեռ Մյուրիս</p> 

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ն» դրամ

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	71351540/65	Տեխնիկական հսկողության ծառայություններ	-	-	-	-	-	-	808,718,880	808,718,880	808,718,880	808,718,880	808,718,880	808,718,880	808,718,880	808,718,880

** հրավերում գումարները նշվում են տրոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տրոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ	Կ Ա Տ Ա Ր Ո Ղ	
<p>«Ն» տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն «Ն» ք.Երևան, Կառավարական տուն 3, «Ն» կենտրոնական գանձապետարան «Ն» 900011002632 «Ն» 02815457 գլխավոր քարտուղար Հ. Բատիկյան</p>   <p>(ստորագրություն)</p>	<p>Էգիս Ինթերնեյշնլ ընկերություն Հասցե՝ Ֆրանսիա, Գայանկուղ 78280, Ավենյու դու Յենտղե 15 «Ն» 582 132 551 00174 Էլ. փոստի հասցե՝ tender-unit.ecca@egis.fr Հեռ.՝ +33 1 39 41 40 00 Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի տնօրեն Ադնո դը Ղուփի</p>	<p>«Էգիս Ինթերնեյշնլ ընկերության» հայաստանյան մասնաճյուղ Հասցե՝ «Ն», ք.Երևան Ջեյմս Բրայսի փ., տուն 19/1 Էլ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ «Ն» 21700-003-022944-001 «Ն» 02622332 Էլ. փոստի հասցե՝ pierre.meurisse-ext@egis.fr Հեռ.՝ +33 6 11269104 Լիազորված անձ՝ Պիեռ Մյուրիս</p>  <p>(ստորագրություն)</p> <p>Կ.Տ.</p>

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____ ստորագրություն
 _____ ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____ ստորագրություն
 _____ ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

TERMS OF REFERENCE – PROCUREMENT SCHEDULE *

AMD

Lot N set by the Invitation for Bids	Common Procurement Vocabulary (CPV) set by the Procurement Plan	Terms of Reference	Measurement Unit	Total price/AMD	Overall quantity	Service	
						Address	Deadline**
1	71351540/65	Below	AMD	808,718,880	1	According to the list	Below

* The deadline of service may not be longer than December 25 of the given year.

**TERMS OF REFERENCE – PROCUREMENT SCHEDULE
SECTION 1 and SECTION 2**

Technical Supervision of Rehabilitation Works of facilities included in Section 1 (RA Syunik, Gegharkunik, Vayots Dzor, Ararat, Armavir marzes) and Section 2 (RA Shirak, Lori, Aragatsotn, Tavush, Kotayk, Gegharkunik marzes) financed by 2020 State Budget of the Republic of Armenia

Project Name: Rehabilitation of RA state roads and transport facilities

Source of Funds: 2020 State Budget of the Republic of Armenia

Client: RA Ministry of Territorial Administration and Infrastructure

Service Name: Technical Supervision of Rehabilitation Works of RA State included in Section 1 (RA Syunik, Gegharkunik, Vayots Dzor, Ararat, Armavir marzes) and Section 2 (RA Shirak, Lori, Aragatsotn, Tavush, Kotayk, Gegharkunik marzes) financed by 2020 State Budget of the Republic of Armenia

Roads Titles and Sections:

Section 1			
Rehabilitation of Roads and Transport Facilities under Section 1			
Road Title	Road Intent /Class	Section length (km) subject to rehabilitation	Terms(Starting with the effective date of the Contract signed with the Contractor
Zone 1. RA Syunik Marz			
M-2, Yerevan-Eraskh-Goris-Meghri-Iran border	Interstate	Km167+600-km174+100 section rehabilitation (6.5 km)	190 days, no later than December 10, 2020
		Km265+000-km270+000 section rehabilitation (5 km)	180 days, no later than December 10, 2020
H-46, M2-Tatev-Aghvan M2 (Syunik)	National (Republican)	Km 25+000-km 37+500 section rehabilitation (12.5 km)	210 days, no later than December 10, 2020
Zone 2. RA Gegharkunik Marz			
		Km 5+750- km	120 days, no later than

		subgrade and metal guardrails installation (0.14 km)	
		Km 6+850 – km 7+034 section: rehabilitation of subgrade and metal guardrails installation (0.18 km)	120 days, no later than December 10, 2020
		Km64+500- km66+000 section rehabilitation (1.5 km)	190 days, no later than December 10, 2020
M-14, M-4-Shorzha-Vardenis	Interstate	Km 32+888- km33+628 u km52+970- km53+350 construction of gabion retaining walls at disrupted segments	120 days, no later than December 10, 2020
		Km19+450 - km39+400 section rehabilitation (20 km)	190 days, no later than December 10, 2020
Main Community Road of Artsvanist Community in Geghrakunik Marz of RA	Regional (Marz)	(3.3 կմ) 3,3 km length section rehabilitation (3.3 km)	180 days, no later than December 10, 2020
Zone 3. RA Yayots Dzor Marz			
H42, /M-2/ - Zarithap-Nor Aznvaberd-Nakhidjevan Border automobile road	National (Republican)	Km9+500 - km23+500 section rehabilitation (14 km)	210 days, no later than December 10, 2020
Zone 4. RA Ararat Marz			
/H-13/ - Norabats- /H-14/	National (Republican)	Km33+500 - km42+600 section rehabilitation (9.1 km)	210 days, no later than December 10, 2020
		5,2 km section rehabilitation (5.2 km)	110 days, no later than December 10, 2020
Zone 5. RA Armavir Marz			
M-9, M-1-Talin-Karakert-Turkey Border	Interstate	Km53+800- km58+000 section rehabilitation (4.2 km)	190 days, no later than December 10, 2020
H-17, M-5-Armavir-M-9	National (Republican)	Km0+000 - km2+070 (2.07 km)	210 days, no later than December 10, 2020
Metsamor Museum Access 4,1 km (3,6+0,5). Taronik vill. sidewalks construction km 2+119- km 2+700 (leftside), km 2+138-km2+700 (rightside)	National (Republican)	Km2+119-km2+700 (leftside), Km2+138- km2+700 (rightside)	60 days, no later than December 10, 2020

T-3-21, M5-Yervandashat-Bagaran	Regional (Marz)	Km19+900-km22+400 section rehabilitation (2.5 km)	150 days, no later than December 10, 2020
T-3-11, /H-15/ (Armavir vill..) - Nalbandyan - Getashen - Nor Kesaria - /M-5/	Regional (Marz)	Km0+000- km3+000 section rehabilitation (3.0 km)	150 days, no later than December 10, 2020

Section 2

Rehabilitation of Roads and Transport Facilities under Section 2			
